«ԱՄՐԱԿԻՑԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2024-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Հաստատության անվանումը՝ «ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոց»
Դպրոցի կանոնադրությունը գրանցվել է 22.01.2003թ.-ին ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Ստեփանավանի տարածքային բաժնի կողմից:
Համաձայն ՀՀԿԳՄՍ Նախարարի 2011թ.-ի հուլիսի 15-ի թիվ 814-Ա/ք հրամանով տրված լիցենզիաների դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ կրթական ծրագրերը:
ԼԻՑԵՆԶԻԱ ԱN0465
Տարրական ընդհանուր կրթություն-41 տեղ
ԼԻՑԵՆԶԻԱ ԱN0455)
Հիմնական ընդհանուր կրթություն-62 տեղ
ԼԻՑԵՆԶԻԱ ԱN0357
Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն-47տեղ
Հաստատության հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Ամրակից
Փողոցը՝ 2-րդ փողոց
Շենքի համարը՝ 12
Փոստային դասիչը՝ 1904
Կապի միջոցները.
Հեռախոս՝ +374-256-2-44-68
էլեկտրոնային փոստ՝ amrakits@schools.am
Վեբ կայք՝ http://schoolamrakits.am/school
Կազմակերպա-իրավական տեսակը՝ ոչ առևտրային
Իրավաբանական տեսակը՝ ՊՈԱԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Ամրակիցի (նախկինում Կիրովո) դպրոցը հիմնադրվել է 1939թ. որպես ռուսական տարրական դպրոց: 1946-1961 թթ. գործել է իբրև յոթնամյա, 1961-1991թթ՝ ութնամյա ռուսական, այնուհետև , իսկ 1991թ. մինչ օրս՝ հայկական միջնակարգ դպրոց: Իր գոյության ընթացքում դպրոցը տվել է ավելի քան հինգ հարյուր շրջանավարտ, որոնցից շատերը աչքի են ընկել հայրենանվեր աշխատանքով: Դպրոցում առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել աշխատանքային դաստիարակությանը: Պատահական չէ, որ դպրոցի մի շարք աշակերտներ դպրոցամերձ հողամասում աճեցրած մշակաբույսերով մեծ հաջողությամբ մասնակցել են ժողովրդական տնտեսության նվաճումների համամյութենական ցուցահանդեսին և արժանացել մեդալների, կրծքանշանների, պատվոգրերի ու գովասանագրերի: Դպրոցի պատմության մեջ հիշարժան է հատկապես 2000 թվականի մայիսի 31-ը, երբ հիմնադրվեց և երեք ամիս անց բացվեց դպրոցի նորակառույց շենքը:

Դպրոցի նորմատիվային ժամկետը 12տարի է՝ եռաստիճան համակարգով.
1) 1-ին աստիճան՝ 4 տարի, 1-4-րդ դասարաններ
2) 2-րդ աստիճան՝ 5 տարի, 5-9-րդ դասարաններ
3) 3-րդ աստիճան՝ 3 տարի, 10-12-րդ դասարաններ

Ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Հանրակրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ոլորտը կարգավորող այլ օրենքներով և իրավական ակտերով:
Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Դրանք մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
Դպրոցի բաժիններից է դասպատրաստումը ,որն էլ ուսումնական պրոցեսի շարունակությունն է՝արտադասարանական ժամերին:
Առանձնակի ուշադրություն է դարձրվում երեխաներին սովորել սովորոցնելու վրա, դրանով նպաստում նրանց մտածողության զարգացմանը, ինքնուրույնության ձևավորմանը:

Տեղեկատվություն ուսումնական հաստատության անձնակազմի մասին

1.	Վարչական աշխատողներ	2
2.	Աշակերտներ	48
3.	Ուսումնաօժանդակ անձնակազմ	3
4.	Ուսուցիչներ	21
5.	Սպասարկող անձնակազմ	7
6.	Ուսուցչի օգնական	1
7.	Հոգեբան	1

1. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը

1.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը

Հ/Հ	Անվանումը		Նկարագիրը	Առաջարկություն՝ /կարիքի դեպքում/
1.	Շենքի տիպը		Տիպային	
2.	1 մասնաշենք		Ուսումնական	
3.	Հարկայնությունը		երկհարկանի	
4.	Նկուղային հարկ		Առկա չէ	
5.	Ապաստարան		Առկա չէ	Անհրաժեշտ է
6.	Հանդերձարան՝ միջանցքում		Առկա չէ	Անհրաժեշտ է
7.	Զուգարան		2 հատ	
8.	Լոգարան		Առկա չէ	
9.	Ջրամատակարարումը		Շուրջօրյա կենտրոնացված	
10.	Կոյուղացումը		Կենտրոնացված	
11.	Ջեռուցումը		Կենտրոնացված	
12.	Դպրոցի կից տարածք		Առկա է	
13.	Բացօթյա սպորտհրապարակ		Առկա է	
14.	Մարզադահլիճ		Առկա չէ	Անհրաժեշտ է
15.	Նիստերի դահլիճ		Առկա չէ	Անհրաժեշտ է
16.	Տնտեսական պահեստ		Առկա չէ	Անհրաժեշտ է
17.	Սննդի պահեստ		Առկա է	
18.	Ճաշարան		Առկա է	
19.	Գրադարան		Առկա է	
20.	Բուժսենյակ		Առկա չէ	Անհրաժեշտ է
21.	Դասասենյակներ		10	
22.	Լաբորա-տորիա՝ որից	Քիմիա	Առկա չէ	Անհրաժեշտ է
		Ֆիզիկա	Առկա չէ	Անհրաժեշտ է
		Կենսաբանություն	Առկա չէ	Անհրաժեշտ է
		Այլ	--------	
23.	ՆԶՊ կաբինետ		Առկա է	Անհրաժեշտ է
24.	Համակարգչային կաբինետ		Առկա է	
25.	Աշխատասենյակ (վարչական աշխատողների)		Առկա է	

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• 2000 թվականին կառուցված դպրոցի շենքը երկհարկանի է, տուֆակերտ • Անվտանգ ուսումնական միջավայր՝ տեսանելի վայրում փակցված տարհանման սխեմա, 2 մուտք և ելք • Առաջին հարկում առկա է թեքահարթակ • Դպրոցը գազաֆիկացված է, ունի ջեռուցման լոկալ համակարգ • Ապահովված է մշտական տաք և սառը ջրով • Առկա է ՆԶՊ դասասենյակ՝ իր զենքի պահոցով, • «Արմաթ» ինժեներական լաբորատորիա • «Սնունդ» ծրագրի սննդի համար նախատեսված պահեստ • Դպրոցի տարածքը ասֆալտապատված և ցանկապատված է , անվտանգ սովորողների ազատ տեղաշարժման համար • Առկա են սպորտհրապարակ, խաղահրապարակ • Ընդարձակ, մշտապես բարեկարգ բակ, մրգատու այգով • Ընդարձակ տարածք, մեծ և լուսավոր դասասենյակներ • Դպրոցն ունի ժամանակակից կահավորմամբ գրադարան՝, համալրված ժամանակակից գույքով և գրապահարաններով • Դպրոցն ունի վերանորոգված և կահավորված ճաշարան • Լուսամուտները փոխված են • Վերանորոգված, առանձնացված (աղջիկ-տղա) սանհանգույց	• Երկրորդ հարկի տարհանման աստիճանները ունեն ամրեցման կարիք, համապատասխանեցնելով քաղաքաշինության պահանջվող նորմերին. • Նկուղի, թաքստոց-ապաստարանի բացակայություն • Համակարգչային լսարանի անբավարար կահավորվածություն • Միջանցքներում հանգստի գոտու բացակայություն • Դպրոցը կառուցման օրվանից ի վեր չի վերանորոգվել • Դասասենյակներում մանրահատակը ունի բարեկարգման կարիք • Էլեկտրաէներգիայի ցանցը կարիք ունի հիմնանորոգման • Չկան ուսումնական լաբորատորիաների համար նախատեսված սենյակներ և առարկայական կաբինետներ • Չկան վարչատնտեսական աշխատակիցների համար առանձնացված սենյակներ և գիշերային պահակների հանգստի համար նախատեսված սենյակ • Տեխնոլոգիայի կաբինետի բացակայություն • Հաստատությունը չունի մարզադահլիճ և հանդերձարան • Չկան անհրաժեշտ պայմաններ և հարմարեցումներ ԿԱՊԿՈՒ երեխաների համար

1.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծությունը

Հ/Հ	Գույքի կամ սարքավորման անվանումը	Քանակ	Ծանոթություն
1.	Աշակերտական սեղան, աթոռներ	280	լավ
2.	Գրատախտակ մարկերով	3	լավ
3.	Գրատախտակ	9	լավ
4.	Ուսուցչի սեղան	9	բավարար
5.	Ուսուցչի աթոռ	9	բավարար
6.	Գրապահարան	3	բավարար
7.	Չհրկիզվող պահարան	1	բավարար
8.	Հեռուստացույց	1	անբավարար
9.	Համակարգիչ	10	6 բավարար, 4 լավ
10.	Պլանշետ	15	լավ
11.	Բազմաֆունկցիոնալ սարք	2	1 բավարար, 1 լավ
12.	Լազերային տպիչ	1	բավարար
13.	Պրոյեկտոր	2	գերազանց
14.	Արմաթ լաբոլատորյայի գույք, սարքավորումներ		լավ
15.	Դյուրակիր համակարգիչ	1	բավարար
16.	Սառնարան	1	լավ
17.	Սալօջախ	1	բավարար
18.	Ջրատաքացուցիչ	1	լավ
19.	Գազի կաթսա	2	լավ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• ՏՀՏ (6 համակարգիչ, 1 նոութբուք, 2 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, 2 պռոյեկտոր, 15 պլանշետ • Աշակերտական նոր գույք (սեղան 1 տեղանոց) 40 կոմպլեկտ, սեղան մեծ չափսի (2 տեղանոց, կապույտ) 10 կոմպլեկտ, սեղան միջին չափսի (2 տեղանոց, կանաչ) 14 կոմպլեկտ,	• Նոր սերնդի էլեկտրոնիկային գրատախտակների բացակայություն • Համակարգչային սենյակի սարքավորումների, կահավորման վերջնական բացակայություն • Լաբորատոր ժամանակակից սարքավորումների

սեղան փոքր չափսի (2 տեղանոց, դեղին) 10 կոմպլեկտ • Տարրական դասարանների շախմատի գույք(6 հատ) • Նորագույն տեխնոլոգիաներով հագեցված «Արմաթ» ինժեներական լաբորատորիա • 2018 թվականին դիզայներական ոճով վերանորոգված և համալրված գույքով գրադարան • Դպրոցում առկա է վերանորոգված և կահավորված խոհանոց, որտեղ առկա է գազօջախ, սառնարան, ջրատաքացուցիչ, լվացարան, չժանգոտվող մետաղյա դարակաշարեր • Դպրոցում առկա է վերանորոգված ճաշարան, որտեղ « Կայուն դպրոցական սնունդ» ծրագրով տաք սնունդ են ստանում տարրական դասարանի 15 սովորող	բացակայություն • Ուսումնական դիդակտիկ նյութերի բացակայություն • Ներդրված մեթոդառարկայական կաբինետների բացակայություն • Ուսուցչական գույքի՝սեղան-աթոռների նորով փոխարինելու կարիք • Ներառական կրթությունը իրականացնելուն համապատասխան գործիքների (տարբեր տեսակի դիդակտիկ խաղեր, մոտորիկան զարգացնող, կենտրոնացնող ավազաթերապիայի սեղան) բացակայություն/ այս պահին ունենք 4 կարիք ունեցող երեխա • Թվային գրադարանի բացակայություն • Տեսողական և լսողական խանգարումներ ունեցողների համար ռեսուրսների բացակայություն • Մարզագույքի բացակայություն • Համացանցի հզորացման կարիք • ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների և համապատասխան նյութերի բացակայություն

1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցի կառավարման խորհուրդը (այսուհետ խորհուրդ) հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները • Քննարկում է	• Խորհրդակցական մարմինների համագործակցային աշխատանքի և նախաձեռնությունների պասիվություն • Համագործակցության նեղ շրջանակներ • Խորհրդի անդամների ծանրաբեռնված լինելը • Վարչական աշխատանքի հետ

ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները • Լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան • Իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված կամ դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ • Խորհուրդն ակտիվորեն ներգրավված է դպրոցի կառավարման գործում, խորհրդի նիստերի ընթացքում քննարկվում են դպրոցի կառավարման օրակարգային հարցերը • Խորհրդի ներկայացմամբ հաստատում է դպրոցի ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժների հաշվետվությունները • Ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության, առաջադիմության և հաստատության ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների նկատմամբ վերահսկողություն • Դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ	մասնագիտական գործունեության համատեղման բացակայություն • Շջանավարտների խորհրդի բացակայություն • Աշակերտական խորհուրդը բավարար չափով ակտիվ չէ, սեփական նախաձեռնություններով հաճախ հանդես չի գալիս

վերահսկողություն է իրականացնում խորհուրդը • Կառավարման խորհրդի վարչական համակազմի և խորհրդցական մարմինների թափանցիկ համագործակցություն • Բոլոր օղակների աշխատանքի ամրակարգվածություն և վերահսկողություն • Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական ծրագրերի իրականացման գործում ակտիվորեն ներգրավված է դպրոցի մանկավարժական խորհուրդը, ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի առնչությամբ, հայտնում է իր դիրքորոշումը, ընդունում որոշումներ օրակարգային հարցերի վերաբերյալ • Կարգապահություն և պատասխանատվություն • Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարողական • Տնօրենը խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը • Տնօրենը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է խորհրդի նիստերին,աջակցում դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքներին • Դպրոցի տնօրենը խորհուրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը	

• Խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը, աջակցում ուսուցիչների մասնակցությանը հերթական և կամավոր ատեստավորումներին • Ապահովում է արտադասարանական խմբակների բնականոն գործունեությունը • Ուսումնական պլանին համապատասխան՝ ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար • Ապահովում է դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը • Դպրոցի տնօրենը կառավարման խորհուրդին է ներկայացնում դպրոցի գործունեությանը վերաբերող հարցերը • Խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը • Դպրոցի և ծնողական համայնքի միջև կապող օղակ է հանդիսանում դպրոցի ծնողական խորհուրդը, սովորողների արտադպրոցական աշխատանքներում ապահովում է ծնողների ներգրավվումը, դպրոցում երեխայի իրավունքների պաշտպանությունը երաշխավորում է • Խորհրդակցական ձայնի իրավունքով տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին • Տնօրենը խորհրդի հաստատմանն է ներկայացնում ներքին	

կարգապահական կանոնները, դպրոցի կազմակերպական կառուցվածքը,աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները • Խարհրդի հավանությանն է ներկայացնում նախարարության կողմից հստատված, իր կողմից մշակված ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը • Պարբերաբար ներկայացնում է զարգացման ծրագրի կատարողականը և ուսումնադաստիրակչական աշխատանքների հաշվետվությունը	

1.4 Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցը մասնակցություն է ունենում համայնքային միջոցառումներին (տոնական, հիշատակի, եկեղեցական տոներին նվիրված միջոցառումներ, շաբաթօրյակներ,փառատոններ) • ՏԻՄ և Տարածքային կառավարման ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին՝ Գիտելիքի օր , Վերջին զանգ, ազգային տոներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումներին • Դպրոցը ակտիվ մասնակցություն է ունենում տեղական ինքնակառավարմանը՝ վեր	• Համայնքի, շահառու կազմակերպութրունների, տարբեր սոցիալական խմբերի հետ համագործակցության պակաս • Դպրոցի ֆինանսական սղության պատճառով երբեմն առաջանում են դժվարություններ ապահովելու անհրաժեշտ պայմաններ և միջոցներ կրթական գործընթացի կազմակերպման համար • Մարզադահլիճի բացակայության պատճառով ցուրտ եղանակին երեխաները ֆիզկուլտուրա առարկան անցկացնում են դասասենյակներում • Համայնքի կողմից պետական կրթական քաղաքականության իրականացման թույլ

հանելով համայնքային խնդիրները ըստ հնարավորության • Հանձնարարականների, որոշումների, նորմատիվ իրավական ակտերի ժամկետներում կատարողականության ապահովվում • Համագործակցություն անչափահասների, մանկավարժահոգեբանական կառույցների հետ՝ սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում • Համագործակցություն կրթության կառավարման մարմինների հետ • Համագործակցություն ուսումնադաստիրակչական աշխատանքները կազմակերպելու շրջանակներում (սպորտլանդիա, միջհամայնքային մրցումներ) • Համագործակցություն ծնողական համայնքի, ԱԽ-ի հետ • Ծնողական համայնքը ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում (սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ) և հնարավորինս իրազեկված է • Սոցիալապես անապահով երեխաներին տարբեր ծրագրերի մեջ ընդգրկում • Բոլոր միջոցառումների և իրականացված աշխատանքների հրապարակում • Հաստատության գործունեության թափանցիկություն, հրապարակայնություն և հաշվետվողականություն • Պարբերաբար անցկացվում էն դպրոցի սովորող-ծնողների զրույցներ՝ սովորողների մասնագիտական կողմնորոշմանը	աջակցություն • Երիտասարդական ծրագրերի և միջոցառումների կազմակերպման, անցկացման համար անհրաժեշտ պայմաններ բացակայություն • Էկոլոգիական ոչ ֆորմալ կրթության և դաստիարակության ծրագրերի բացակայություն • ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ֆինանսական միջոցների, դրամաշնորհների և ներդրումային ծրագրերի բացակայություն • Ծնողների ինքնուրույն նախաձեռնությունների պակաս

նպաստելու համար • «Կրթության ազգային ինստիտուտ» ՊՓԲԸ-ի լուծարումից հետո դպրոցը կրթության բովանդակության վերլուծության, մասնագիտական զարգացման, նորարարության և մեթոդական ծրագրերի մշակման նպատակով համագործակցում է ԿԶՆԱԿ-ի հետ • ԳԹԿ – դպրոցում իրականացնում են արտաքին գնահատում , կազմակերպում են ավարտական, պետական ավարտական և միասնական քննությունները • ՏՄԱԿ-ը երեխայի կրթության կազմակերպման վերաբերյալ անհրաժեշտ խորհրդատվություն և մասնագիտական աջակցություն է տրամադրում երեխայի ծնողին, ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողներին՝ ապահովելով ծնողի, մասնագետների և մանկավարժական աշխատողների միջև մշտական կապ (փոխադարձ այցելություններ, հեռահաղորդակցություն, առցանց խորհրդատվություն): Մանկավարժական աշխատողներին տրամադրվող խորհրդատվությունն առավելապես ուղղված է երեխայի՝ ուսումնական գործընթացում մասնակցության բարձրացմանը, ուսուցման ռազմավարությունների և վարքի կարգավորման մոտեցումների ընտրությանը • « Մասնակցային դպրոց» հիմնադրամ- իրականացնում է ուսուցիչների պարտադիր վերապատրաստում • Համագործակցություն ԿԳՄՍ նախարարության, Լիազոր մարմինների հետ • Դպրոցը համագործակցում է ՀՀ	

ՆԳՆ Ոտիկանության Ստեփանավանի անչափահասների բաժնի հետ (զրույց, դասախոսություն) • Դպրոցը համագործակցում է ՀՀ ՆԳՆ Փրկարակ ծառայության (զրույցներ, տագնապ, տարհանման կազմակերպում) • Դպրոցը համագործակցում է Ստեփանավանի Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատի հետ (այլընտրանքային նկարչության կազմակերպում, երեխաների մոտ զարգացնելով այլընտրանքային մտածողությունը, գունազգացողությունը և գեղագիտական ճաշակը) • Դպրոցը համագործակցում է Ստեփանավանի Ստեփան Շահումյանի տուն- թանգարանի հետ(կազմապերվող միջոցառումների և ներկայացումների մասնակցություն)	

1.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Մանկավարժների հերթական պարտադիր ատեստավորում • Բարձր մասնագիտական պատրաստվածությամբ հմուտ և նախաձեռնող մասնագետներ • Երիտասարդ, արհեստավարժ ուսուցիչներ՝ դպրոցում աշխատելու ցանկության և դրա հնարավորության առկայություն • Ինքնակրթության, ինքնազարգացման	• ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման ցածր մակարդակ • Ուսուցիչների համագրոծակցությունը այլ դպրոցների հետ թույլ է • Մոտիվացիայի պակաս ուսուցիչների մոտ • Սեփական տեսաձայնային շտեմարանի

նախաձեռնություն • Փոռձառու և որակյալ մանկավարժական անձնակազմ • Աշակերտակենտրոն մոտեցում • Մանկավարժներից 2-ը անցել են կամավոր ատեստավորում • Ուսուցիչները տիրապետում են տեղեկատվական տեխնոլոգիաներին, անցել են վերապատրաստումներ՝ կատարելագործելով իրենց հմտությունները և անհրաժեշտության դեպքում պատշաճ կարգով իրականացնում էն հեռավար ուսուցում • Պարտաճանաչություն, բարձր պատասխանատվություն, մարդկային բարձր որակներ • Սովորողի հաջողության կարևորում և գնահատում • Մասնագիտական որակների և մեթոդական հմտությունների զարգացումն ապահովելու նպատակով ուսուսիչները մշտապես մասնակցում էն «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»- ի վերապատրաստման դասընթացներին • Բազմամասնագիտական թիմում աշխատում են 1 ուսուցչի օգնական, 1 հոգեբան, «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի խմբակավար • Դպրոցում դասավանդում են բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող և ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչներ • Ապահովվում է ուսուցչի մասնակցությունը	բացակայություն • Տարակարգեր ձեռք բերելու, կամավոր ատեստավորում, «Լավագույն ուսուցիչ» մրցույթին մասնակցելու նկատմամբ անտարբերություն • Կամավոր ատեստավորման մասնակցած ուսուցիչների նվազ քանակ • Դժվար ադապտացում նորարարություններին և փոփոխություններին • Մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածության պակաս

մասնագիտական զարգացման կարիքի հիման վրա իրականացվող վերապատրաստմանը • Օգտվելով ուսումնական հաստատության գրադարանի, տեղեկատվական պահոցների ծառայություններից՝ զարգացն ում են գիտելիքները, ունակությունները և մասնագիտական հմտությունները • Ընտրվում և կիրառում է դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակը • Ուսումնական հատատությունում պաշտպանված է մանկավարժական աշխատողների մասնագիտական վարկանիշն ու արժանապատվությունը • Մանկավարժները պարբերաբար մասնակցում են ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում վերապատրաստումների, գիտաժողովների, քննարկումների և լսումների • Դպրոցում դասավանդում են մեծամասամբ ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ • Ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնակատարի (Նարինե Մուրադյան) մեթոդական հոդվածը տպագրվել է հանրապետական պարբերականներում՝ «ՎՊՀ, Գիտական տեղեկագիր» (էջեր 207-215) • Դպրոցում ունենք 1 մենթոր	

ուսուցիչ, ով ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից անց է կացնում նոր ՀՊՉ վերապատրաստումներ • Մանկավարժները օգտվում են իրենց իրավունքներից, լիազորություններից և խրախուսման ձևերից • Դպրոցում պարբերաբար իրականացվում են դասալսումներ տնօրինության, մ/մ նախագահների կողմից, փոխադարձ դասալսումներ ուսուցիչների կողմից, կատարվում են քննարկումներ, վերլուծություններ	

1.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և սարքերի հետ աշխատանքի հմտությունների ձևավորում • Ազգային և համաշխարհային արժեքների վրա հիմնված արժեքային համակարգի ձևավորում • Աշխարհում տեխնոլոգիաները բառացիորեն ամենուր են, և երեխաները ավելի շուտ են հարմարվում դրան, քան նախորդ սերունդները: Ի տարբերություն	• Դպրոցը չունի լաբորատորիաներ և փորձերի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներ • Ելնելով պրակտիկ դասերի կազմակերպման անհրաժեշտությունից՝ դպրոցի համակարգչային կաբինետը կարիք ունի համալրման նոր համակարգիչներով, ինտերակտիվ գրատախտակով և պրոյեկտրով • Նորարարություններից շատերը

ուսուցիչների, սովորողները մեծանում են թվային աշխարհում: Բոլոր տարիքի սովորողների համար բացարձակապես բնական է օգտագործել տեխնոլոգիան իրենց կյանքի յուրաքանչյուր բնագավառում: • Տեխնոլոգիաների ինտեգրումը կրթական պրոցեսին սովորողների մոտ բարձրացնում է հետաքրքրասիրությունը, խթանում նրանց ներգրավվածությունը և հանգեցնում է ավելի լավ սովորելու և հասկանալու • ՏՀՏ-ի միջոցների կիրառումը իրապես շոշափելի ազդեցություն ունի մանկավարժների աշխատանքի ինտենսիվության, ինչպես նաև աշակերտների ուսուցման արդյունավետության վրա • ՏՀՏ-ի ներդրումը մեծ հնարավորություններ է տալիս կատարելագործելու և բարելավելու մանկավարժական մեթոդները ոչ միայն փորձի փոխանակման և ստեղծագործական գործունեության ընթացքում, այլ նաև գործնական խնդիրների լուծման ժամանակ, որոնց համար հիմք են ուսումնամեթոդական նյութերի կուտակումը, դպրոցի ներքին տեղեկատվական տեխնոլոգիաների և ինտերնետ-տեխնոլոգիաների օգտագործումը մանկավարժների և աշակերտների կողմից • Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը բավարարում է ժամանակակից հասարակության պահանջները • Սովորողների ինքնուրույն որոնման հնարավորություն • Ուսուցման գործընթացը դարձել է ստեղծագործական, զննողական • Սովորելու մոտիվացիայի բարձրացում • Ուսումնական գործընթացի	որպես կանոն մասնագիտական փորձարկման և քննարկման չեն ենթարկվում դպրոցներում • Նորարարության չափանիշների, բովանդակության և մեթոդական գործադրման ոչ լիարժեք իմացությունը թույլ չի տալիս օբյեկտիվորեն գնահատել և կանխատեսել նորույթի ներդրման արդյունքները • Նորարարության ներդնումը միշտ չէ, որ գիտամեթոդական առումով հաջող է ստացվում • Կրթությանը հատկացվող նյութական միջոցների անբավարարություն • Նորարարության ներդրման համար մանկավարժները չեն նախապատրաստվում կազմակերպչական, տեխնիկական և անհատական հոգեբանական առումներով • Տեխնոլոգիայի ներդնումը հեղինակի կողմից չներկայացնելը ենթադրում է ոչ արդյունավետ օգտագործում • Նորագույն տեխնոլոգիաների ներդրման պակաս • Մեթոդական պատրաստվածության և ինֆորմացիայի պակասություն • ՏՀՏ-ի անբավարար քանակ • Համացանցային տարբեր վտանգներ • ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների,նորագույն սարքավորումների ու նյութատեխնիկական բազայի բացակայություն

արդյունավետության բարձրացում • Դասի անցկացման մեթոդների բարելավում • ՏՀՏ կիրառումը դպրոցում, աշակերտին հնարավորություն է տալիս հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապետելու կարողությունը տեղեկատվական աշխարհում • Աշակերտը դառնում է ակտիվ մասնակիցը ուսուցման գործընթացում,իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու,խրախուսում անհատականությունը, ինքնատիպությունը,նախաձեռնությունն ու անկախությունը • Դպրոցն ունի անհրաժեշտ տեխնիկայով համալրված «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, որտեղ մշտապես կազմակերպվում են դասապրոցեսներ՝ ՏՀՏ կիրառմամբ: • Դպրոցի գրադարանը հագեցած է պրոյեկտրով, որը հնարավորություն է տալիս կազմակերպել ինտերակտիվ դասեր • Սահմանված կարգի համաձայն լրացվում են պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ էլեկտրոնային փաստաթղթերը • Հեռավար կրթական հարթակի կիրառում անհրաժեշտության դեպքում • Մեդիագրագիտություն • Յուրաքանչյուր առարկայի դասապրոցեսի ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում • MS Teams միասնական կրթական հարթակ • Անցկացվող սեմինարներ, վեբինարներ • Դպրոցում մատյանները վարումը կատարվում է էլեկտրոնային տարբերակով	

• Էլեկտրոնային մատյանների ստուգում և վերահսկողություն • Դպրոցն ապահովված է անլար և լարային ինտերնետային կապով • Դպրոցը հեռավար ուսուցման նպատակով օգտվում է kznakhimnadram lib.armedu.am, armedu.am, կրթական ռեսուրսներից • Դպրոցի հաջողությունները, ձեռքբերումները, միջոցառումները և հանդեսները լուսաբանվում են դպրոցի պաշտոնական և ֆեսբուքյան էջերում • Ժամանակակից տեխնոլոգիաների ներթափանցումը ուսումնադաստիարակչական գործընթացի մեջ, ուսուցիչը ստանձնում է խորհրդատուի, ուղղորդողի և դաստիարակողի դեր • Որակը արժեքավորվում է պրակտիկայում, երբ ստացվում են փորձարարության արդյունքները • Նորորարական տեխնոլոգիաների օգտագործմունը որքան քիչ ժամանակ և ջանքեր է խլում, այնքան բարձրանում է նրա օպտիմալությունը • Կրթական տեխնոլոգիաների ներդնումը ապահովվում է կոլեկտիվին դրա մեջ ներգրավելու ֆունկցիաները • Ուսուցչի մասնագիտական և անձնային որակների միասնությունը բերում է նորարարական գործընթացին պատրաստ լինելուն • Մանկավարժական նորարարությունն ունի ինքնատիպ բնույթ և որոշակի առանձնահատկություններ. 1) ձևով և բովանդակությամբ նոր արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառում 2) աշակերտների ստեղծագործական ունակությունների և հոգեկան գործընթացների զարգացում և	

դաստիրակություն 3) ուսուցման ակտիվ մեթոդների կիրառում, որոնք պահանջում են բարդության որոշակի մակարդակ ունեցող գիտելիքների յուրացում 4) համագործակցային մեթոդների կիրառում, հետադարձ կապի ապահովում:	

1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ • Հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովում • Չափորոշչի նորմերն ու դրույթները պարտադիր են ուսումնական հաստատության համար • Չափորոշչային պահանջներին համապատասխան հանրակրթական ծրագրերի մշակվում • Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների միջոցով կարողունակությունների ձևավորում • Հանրակրթական ծրագրերի իրականացման կազմակերպում և դրա նկատմանբ պետական վերահսկողություն • Հանրակրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է առարկայական ծրագրերի	• Հասարակության և անհատի կողմից հանրակրթության ռազմավարական նշանակության կարևորման առկա վիճակ • Հանրակրթության նպատակադրումներում բովանդակային, իմացական զարգացման ու սահունության բացեր • Հանրակրթության նպատակադրումների թույլ մրցունակություն • Հստակ սահմանված չեն հանրակրթության վերջնարդյունքները • Չափորոշիչները թույլ են շաղկապված սոցիալական զարգացման ծրագրերի հետ • Հանրակրթական առարկաների բովանդակային միջուկները միշտ չէ, որ բխում են տվյալ առարկայի նպատակներից և պահանջներից, այլ կազմված են տարիների ընթացքում կուտակված նյութերի և

միջոցով և չափորոշչի համաձայն ներառում է հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները • Հանրակրթական ծրագրի բովանդակությունն արտացոլվում է ուսումնական առարկաների ծրագրերում • Հանրակրթական հիմնական ծրագրերի յուրաքանչյուր կրթական աստիճանի առարկայացանկն ամրագրվում է ուսումնական հաստատության ուսումնական պլանում • Տարրական, հիմնական և միջնակարգ աստիճաններում չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության ապահովում • Երեխաների կրթություն ստանալու երաշխավորված իրավունք • Կարիքների վրա հիմնված կրթության կազմակերպում • Չափորոշչային պահանջներին համապատասխան ներառական և որակյալ կրթության ապահովում • Պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան թեմատիկ պլանների կազմում • Սովորողների գիտելիքների, հմտությունների, կարողություններնի և ունակությունների զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացում • Ըստ կրթության աստիճանների և ուսումնական բնագավառների շրջանավարտներին ներկայացվող	ավանդական մոտեցումների հիման վրա • Չափորոշիչների պահանջները աստիճանական չեն զարգանում՝ հանգեցնելով հանրակրթության մատուցված, յուրացված և գնահատված բովանդակության միջև էական տարբերությունների • Սովորողների կարողությունների, հմտությունների և արժեքների զարգացումը թույլ է • «TIMSS 2011» միջազգային ստուգատեսի գնահատման արդյունքներով, սովորողներին ներկայացվող պահանջները հիմնականում իմացական գիտելիքի բնույթի են և առկա է կիրառական հմտությունների շեշտադրումների պակաս • Չափորոշիչները գրված չէն այնպիսի ոճով, որը հնարավորություն կտար ուսուցիչներին այն հեշտությամբ օգտագործել ուսուցման և գնահատման ժամանակ՝ դասի ընթացքում • Չափորոշիչներով սահմանված բովանդակային նվազագույն պահանջները ներառում են ավելի շատ նյութ, քան կարելի է սահմանված ժամանակմիջոցում սովորել կամ սովորեցնել • Դասարանի մի մասը իր գիտելիքները կարողանում է վերարտադրել, բայց չի կարողանում օգտագործել իրեն ծանոթ կամ անծանոթ իրավիճակներում • Երբեմն թեմային ներկայացվող չափորոշչային պահանջը փոքր է, իսկ ծրագրով նախատեսված է մեծ ծավալի նյութ • Չափորոշչում շատ մեծ պահանջներ են դրված և թույլ սովորող

որակական պահանջներ • Չափորոշչային նորմերը ու դրույթները պարտադիր են ուսումնական հաստատության համար • Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքը բացահայտելով արձանագրվում և վերլուծվում է նրա ուսումնական ձեռքբերումներն ու դժվարությունները • Շարունակաբար ստուգվում ու գնահատվում է սովորողի կողմից Հանրակրթության պետական չափորոշիչով ամրագրված բովանդակային բաղադրիչների յուրացման և տիրապետման աստիճանը • Գնահատման տարբեր ձևերի կիրառման միջոցով հնարավորություն է ըվում սովորողին առավելագույնս ցուցաբերել իր գիտելիքները, կարողությունները և հմտությունները • Խթանվում է սովորողի հետաքրքրությունը դասավանդվող ուսումնական առարկայի նկատմամբ և բարձրացվում ուսումնառության արդյունավետությունը • Կարողունակությունների վրա հիմնված կրթության կազմակերպում • Ի նպաստ կրթության որակի բարձրացման ՆԴՎ-ի տեղայնացում մ/մ աշխատանքային պլաններում, համապատասխանեցնելով նոր չափորոշչի պահանջներին • Կրթական կարիքների գնահատման համար հարցազրույցների կազմակերպում • Հետ մնացող և լավ չյուրացրած աշակերտների հետ անհատական	աշակերտները դրանք չեն կարող հաղթահարել • Նոր չափորոշչին անցմամբ պայմանավորված որոշակի դժվարություններ • Օլիմպիադաների մասնակցության ցածր տոկոս • Հանրապետական օլիմպիադաների մասնակցության բացակայություն • Առարկայական մրցույթների, բանավեճերի, քննարկումների հազվադեպ անցկացում • Լաբորատոր փորձեր իրականացնելու անհնարինության պատճառով բնագիտամաթեմատիկակական առարկաների նկատմամբ հետաքրքրության նվազում • Անհրաժեշտ ռեսուրսների բացակայություն ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության համար • ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի բացակայություն

անվճար պարապմունքներ • Դպրոցում ստեղծած է ապահով միջավայր սովորողի ուսուցման և դաստիարակության գործընթացը իրականացնելու համար	

1.8 Բազմակարծիք,ներառական և մասնակցային արժեքային միաջավայրի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Քննադատական և ստեղծագործական մտածողություն, մասնակցային մշակույթ, հանրային համակեցության մշակույթ, անհատի ազատություն, սոցիալական արդարություն և համերաշխություն, բազմակարծություն և իրավահավասարություն խթանող առանցքային կոմպետենցիաների փոխանցում սովորողներին • Բազմակարծիք միջավայրը թելադրում է ընտրել այս կամ այն տարբերակը օպտիմալ որոշում կայացնելու համար • Իրավիճակի բազմակողմանի վերլուծությունն ու գնահատումը, տարբեր գործոնների հաշվառումը արդյունավետ որոշումների նախապատրաստումը կարող է իրականացվել միայն բազմակարծիք միջավայրում • Բազմակարծության առավելություններ՝ ➢ Խնդրի ընկալնման հեշտություն ➢ Խմբային մոտեցում, օբյեկտիվիզմի գերակայություն ➢ Այլընտրանքային կարծիքների առկայություն • Բազմակարծությունը բոլոր	• Սակավ միջոցառումներ սովորողների կրթական, սոցիալական և առողջապահական շահերի և իրավունքների մասին • Երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմի աշխատանքից դուրս մնացած ընտանիքներ՝ նրանց հիմնականում թողնելով մասնագիտական կարծիք լսողի դեր • Ծնողների հետ հանդիպումների կազմակերպում՝ թեստերի արդյունքներին ծանոթացնելու կամ երեխայի վերաբերող որոշումները հայտնելու համար • Աշակերտների համար հնավորության բացակայություն՝ քննադատաբար արձագանքելու այն ամենին, ինչ սովորում են • Այլոց բարեկեցության մասին մտահոգության բացակայություն • Որպես քաղաքացիներ գործելու պատասխանատվության բացակայություն • Հասարակությունում տեղ գտած բացասական երևույթների դեմ դրական դիրքորոշումների սակավություն (օրինակ՝ ռասիզմ, գլոբալ միգրացիա, սխալ գաղափարներ և այլն) • Ներառական կրթության

խորհրդակցական, կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների հիմքն է • Իրողությունների մասին դատողություններ անելու հնարավորություն • Համատեղ գործողությունների համար պարտավորությունների, գործողությունների և նպատակների շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերման և որոշումների ընդունման առկայություն • Առկա է կոլեկտիվի լիիրավ անդամի գիտակցության բարձր մակարդակ • Սովորողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ տարվող աշխատանքներին ներգրավված են դպրոցի անձնակազմը և շահառու մյուս կողմերը • Երաշխավորված ազատ կամաարտահայտության իրավունք, այլակարծությունը սահմանափակող գործոնների բացառում • Բռնության ու հալածանքի ցանկացած ձևի կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքներ • Մասնակցային-հանրային քննարկման արդյունքում որոշումների կայացման գործընթացի ձևավորում • Դպրոցնում կազմակերպվող դասերը ուղղված են մասնակցության համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը • Դասերի ընթացքը կազմակերպված է մասնակցային, խմբային և համագործակցային աշխատանքի սկզբունքներով և փոխկապակցված մասնակցության մյուս մակարդակների հետ	հիմնադրույթների թյուր ընկալում • Ներառական կրթության վերաբերյալ առկա կարծրատիպեր • Հատուկ և ներառական կրթությունը հասարակության մեջ դիտվում է առանձին կատեգորիայի տեր անձնաց կրթության ձև • Շեշտը դրվում է ԿԱՊԿՈՒ սովորողի ուժեղ կողմերը զարգացնելու, , իսկ թույլ կողմերը հիմնականում մնում են առանց զարգացնելու

• Ուսուցման բոլոր փուլերում ապահովված է մասնակցային մշակույթ և կրթություն խթանող արժեքների, մոտեցումների և գիտելիքի հետ զուգակցվող կոմպետենցիաների փոխանցումը • Ինքնուրույն որոշումների ընդունում, փոխհամաձայնության հանգել ու պայմանավորվածություններին հետևել • Աշակերտի սեփական կարծիքների և տեսակետներ արտահայման ազատություն • Բարյացակամ միջավայրի ստեղծում • Բոլորի ձայները լսելի են • Ընտանիքի ներգրավումը կրթական գործընթացում • Ծնողներին ընձեռնված է թիմի աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու հնարավորություն • Ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ համագործակցություն՝ երեխայի կրթության կազմակերպման հարցերով • Մասնագետներ ներգրավելիս առաջնորդվել երեխայի անհատական կրթական կարիքներով • Աջակցություն ստանալ դպրոցի տնօրենից՝ համատեղ դասավանդման հայեցակարգը դպրոցի աշխատակազմին ներկայացնելով որպես ներառական պրակտիկայում առկա լավագույն մոտեցումներից մեկը • Համատեղ դասավանդման իրականացում՝ սկզբում վերցնելով մեկ առարկան կամ մեկ թեման, համատեղ դասավանդողներին հնարավորություն տալով գաղափար կազմելու միմյանց ոճերի ու մասնագիտական	

մոտեցումների մասին • Աջակցություն բազմամասնագիտական թիմի բոլոր անդամներին՝ ելնելով թիմի կարիքներից • Վստահության մթնոլորտ, որտեղ թիմը ընտանիքի հետ առավել արդյունավետ է աշխատում • Կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման վրա հիմնված ներառական կրթություն • Պետությունը աստիճանաբար հաղթահարում է սոցիալական պետության գործառույթն ապահովելու խոչնդոտները • Դպրոցն ընդգրկված է ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցում • Հաղթահարված են ներառականությունը, դրանք խաթարող սոցիալական խոչընդոտները • Դպրոցում կա ՏՄԱԿ-ի կողմից գնահատված, գրանցված որպես ԿԱՊԿՈՒ 4 աշակերտ • ԿԱՊԿ ունեցող սովորողներն ինտեգրված են հասարակությանը, ստանում են ներառական կրթություն • Ուսումնական գործընթացում ԿԱՊԿՈՒ սովորողների լիարժեք ներառում • Ինքնաարտահայտման, ինքնադրսևորման և սոցիալական անհատի ձևավորման պայմանների առկայություն • Դպրոցում աշխատում է բազմամասնագիտական թիմ՝ հոգեբան, ուսուցչի օգնական՝համագործակցելով ՏՄԑԿ-ի հետ • Երեխայակենտրոն կրթության կազմակերպման և կրթական ծրագրի իրականացման	

գործընթաց՝ համաձայն յուրաքանչյուրի կրթության առանձնահատուկ պայմանի և զարգացման առանձնահատկության • Տեղեկատվական հանդիպումների կազմակերպում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընտանիքների համար, երեխայի առաջընթացի ներկայացում • Բազմամասնագիտական թիմի ընդունած որոշումների կատարման ապահովում • Սովորողների կարողունակությունների ձևավորման զարգացում,որակյալ վերջնաարդյունքների ապահովում, ինչպես նաև աշխատողների և սովորողների սոցիալական,առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանություն • Ժողովրդավարական արժեքները խթանելու հարցում ուսուցիչների դերի կարևորում , մասնակցային դասավանդման միջոցով • Հասարակական կյանքին մասնակցություն • Աշակերտների նախապատրաստում և նրանց կարողությունների զարգացում, տեղեկացված մասնակցության համար • Հնարավորության ստեղծում՝ զբաղվել իրենց հետաքրքրող ժամանակակից խնդիրներով • Հաստատության մակարդակում համակեցության կարգի գոյություն • Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության կողմից մշակված շրջանակները՝ միջազգային երկխոսության զարգացումներին համահունչ. դրանց արտացոլումը ազգային,	

տեղական և հանրակրթական քաղաքականություններում, ուսուցիչների մասնագիտական դերը դասարանում և դասարանից դուրս • Աջակցություն աշակերտների ուսուցմանը՝ նպատակի հստակ ընկալման, նախկինում սովորածի վրա կառուցելու համապարփակ մտածելակերպի և հետագայում սովորելու և ձեռքբերումներ ունենալու առումով • Կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու մասնագիտական կոմպետենցիաների տիրապետում	

1.9 Աշխատակազմի արժեորման,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Աշխատակազմի կառավարումը դիտարկվում է «Տաղանդների կառավարում» հայեցակարգի տեսանկյունից, այսինքն մարդկանց (տաղանդների) կառավարումը իրականացվում է այնպես, որ հնարավոր լինի յուրաքանչյուր անձից ակնկալել առավելագույնը • Մարդկային ռեսուրսների կառավարումը իրականացվում է ինչպես «կոշտ», այպես էլ «փափուկ» բաղադրիչներով: Այս երկու բաղադրիչների էությունը կայանում է նրանում, որ հաստատության ներսում կատարման ենթակա	• Բոլոր մարդիկ ռացիոնալ են • Աշխատանքը՝ որպես այդպիսին չի հետաքրքրում մարդկանց: Այն ընդհամենը գումար վաստակելու միջոց է • Տարբեր մրցույթների պասիվ մասնակցություն,ինչպես նաև տարակարգի բացակայություն • Արագ և պարբերաբար կատարվող փոփոխությունների արձագանքման պասիվություն • Դրամական խրախուսման համար գումարի սակավություն • Լրացուցիչ արտոնությունների բացակայություն • Անձի վարքը պայմանավորում է նրա սպասելիքների,

աշխատանքները պետք է պլանավորել, կազմակերպել և վերահսկել (կոշտ, մեղմ), բայց միևնույն ժամանակ կիրառվող մեթոդները և հրահանգները պետք է լինեն աջակցող և նպաստեն աշխատակազմի կողմից աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացմանը • Անձնակազմի արդյունավետ կառավարումը հանդիսանում է որակյալ մանկավարժների ներգրավման, լավագույն մանկավարժներին հաստատությունում պահելու, նպատակներին հասնելու, ինչպես նաև ավելի թափանցիկ և արդյունավետ հաղորդակցման համակարգեր ստեղծելու հիմնաքարերից մեկը • Անձնակազմի արժևորման գործընթացներում առանձնահատուկ նշանակություն ունի խթանման մեխանիզմների արդյունավետությունը՝ պարգևատրման, լրացուցիչ արտոնությունների և բարոյական խթանների նպատակաուղղված կիրառությունը • Խթանել (շահադրդել) աշխատակազմին՝ նշանակում է ուղորդել նրանց վարքը ուսումնական հաստատության նպատակներին հասնելու համար • Անձնակազմի մասին հոգատարությունը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և արդյունավետությունը • Աշխատակազմի ներուժի բացահայտում և ճիշտ օգտագործում, նրանց մասնագիտական կարողությունների զարգացում և	առաջադրված նպատակներին հասնելու համար գործադրված ջանքերի հատուցմամբ

խթանում • Նախապատվության իրավունք • Խրախուսումը տնօրենի կողմից աշխատակազմի հետ աշխատանքի արդյունավետ գործիքներից է, որն օգնում է որոշել տվյալ աշխատակցի գիտելիքների դրսևորման աստիճանը, աշխատանքի արդյունավետությունը և համապատասխանությունը տվյալ պաշտոնին • Մանկավարժական աշխատակազմի արժևորում՝ հասարակության մեջ • Դարերի խորքից մինչև մեր օրերը հասած՝ հարգված ու պահանջված աշխատանք • Ուսուցչի դերից և աշխատանքի որակից կախված անհատների ձևավորում, պետության ապագայի որոշում • Ուսոցչի աշխատանքը՝ ոչ միայն մասնագիտություն, այլ՝ առաքելություն • Ուսումնական հաստատությունը կառավարվում է կրթության գործում մանկավարժական անձնակազմի դերի արժևորման ու կարևորության գիտակցմամբ • Աշակերտների մեջ պատասխանատվության ու համերաշխության ոգու կերտում • Համամարդկային բարոյական սկզբունքներին եւ արժեքներին հավատարմություն • Խրախուսվում է ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման և ատեստավորման գործընթացներին • Պարգևատրումներ, նյութական խրախուսումներ • Պետական պարգևների ներկայացում՝ երիտասարդ	

սերնդի ուսուցման եւ դաստիարակության գործում բարձր արդյունքներ ցուցաբերելու համար • Մասնագիտական և մեթոդական պատրաստվածության բարձրացման նպատակով ուսուցիչները զբաղվում են ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությամբ, մասնակցում տարբեր վերապատրաստումների • Աշխատողները իրենց գիտելիքների մինչև 70 տոկոսը ձեռք են բերում դպրոցում, ոչ ֆորմալ ուսուցման միջոցով: • Ինքնակրթության գործընթացների մեծամասնությունը չպլանավորած և չուղղորդվող գործողություններ են, որոնք տեղի են ունենում աշխատանքային պռոցեսների ընթացքում՝ ելնելով աշխատանքի ընթացքում ծագած մարտահարավերների հաղթահարումից • Ինքնուրույն, սեփական կարիքներից ելնելով համապատասխան գործողությունների իրականացում՝ գիտելիքների ընդլայնման և հմտություններ ձեռք բերելու համար • Ինքնուրույն զարգացման ձգտող մանկավարժներին խրախուսելու և ուսումնական հաստատության կտրվածքով նման գործողություններին նպաստելու և համապատասխան աշխատանքներ տանելու իրականացում	

1.10. Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Հրապարակայնություն, թափանցիկություն և հաշվետվողականություն • Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումներ • Ուսումնական հաստատության՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները և նորմատիվները ձևավորվում են համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N 79-Ն հրամանով • Դպրոցը ֆինանսական հնարավորությունների սահմաններում մշտապես ֆինանսներ են ուղղվում նյութատեխնիկական բազայով հագեցվածության բարձրացմանը • Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվության ներկայացում լիազոր մարմին • Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով անհրաժեշտ կարիքների համար պահանջվող ծախսերի գնահատում • Հաշվապահական հաշվառման իրականացում • Բուջետային հատկացումների արդյունավետ օգտագործում • Ֆինանսական դրության վերլուծություն • Հարկային հատկացումների ճշտության գնահատում • Ընթացիկ ակտիվների և պարտավորությունների գնահատում	• Արտաբյուջետային միջոցների, համայնքի,բարերարների կողմից ներդրվող միջոցների և դրամաշնորհների բացակայություն • ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով միջոցների բացակայություն • Դպրոցի վերանորոգման համար ֆինանսական միջոցների անբավարարություն • Չնախատեսված և չպլանավորված ծախսեր • Դպրոցի ծախսերի մեծ մասն ուղղվում է աշխատավարձի ու դրան հավասարեցված վճարներին, ինչպես նաև դպրոցի պահպանման ծախսերին (էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման դիմաց վճարներ, ընթացիկ վերանորոգում) • Սահմանափակ են դպրոցի նյութատեխնիկական բազայի հագեցվածությանը միջոցներ հատկացնելու հնարավորությունները

• Վճարունակության և ֆինանսական կայունության գնահատում • Տնտեսապես արդյունավետ լինելու համար հաստատությունը չունի Գնումների համակարգողի հաստիք և ձեռք է բերել գնումների համակարգողի ծառայություն • Աշխատավարձի և կոմունալ ծախսերի ժամանակին վճարում • Դպրոցը պայմանագրեր ունի կնքած գրենական, տնտեսական, ծառայությունների մատուցման կազմակերպությունների հետ՝ ուսումնական նպատակով անհրաժեշտ նյութեր, պարագաներ ձեռքբերելու համար • Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ • Մեկ ուսուցչին բաժին է ընկնում 3 աշակերտ • Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածության գործակիցը 20 ժամ է • Ըստ օրենսդրական պահանջների ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում • Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ եկամուտներին համապատասխան գնահատված կարիքի բավարարմանն ուղղված ծախսերի նախահաշվի պլանավորում և կատարում • Դպրոցի կայքում տեղադրվում են ֆինանսատնտեսական հաշվետվությունները և նախահաշիվը	

2. Նպատակների և խնդիրների սահմանումը

Ուլորտ	Խնդիր
• Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	• Դպրոցում ժամանակակից կրթական կարիքները բավարարող ուսումնական միջավայրի անլիարժեքություն (լաբորատորիաների բացակայություն,սպորտդահլիճի բացակայություն • Արտաբյուջետային միջոցների ստեղծում, դրամաշնորհային ծրագրեր
• Կառավարման և խորհրդակցական մարմիններ	• Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև սերտ համագործակցության ամրապնդում • Շրջանավարտների խորհրդի ձևավորում, • Կառավարման, խորհրդակցական մարմինների հետ համագործակցության խորացում, • Խորհրդակցական մարմինների նախաձեռնողականության բարձրացում
• Մանկավարժական համակազմ	• Հմուտ և փորձառու կադրերի համալրում մանկավարժական համակազմին • Կամավոր ատեստավորման և տարակարգի հաղթահարում • Մասնագիտական որակների հետևողական բարձրացում և դասավանդման մեթոդների կատարելագործում,

• Աշակերտական համակազմ	• Սովորողների առաջադիմության բարձրացում, մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցություն • Սովորողների մոտ ինքնակրթության և ինքազարգացման մոտիվիացիայի ստեղծում • Ապահովել աշակերտների աշխարհաճանաչման ձևավորումը,ազգային և համամարդկային արժեքների յուրացումը
• Ծնողական համակազմ	• Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում սերտ համագործակցության ստեղծում • Ծնողական համակազմի մասնակցության ցածր մակարդակ, սեփական նախաձեռնությունների պակաս
• Համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	• Հասարակական ակտիություն ցուցաբերելու հմտությունների զարգացում • Համագործակցությունների շրջանակի ընդլայնում • Համայնքային մակարդակում կազմակերպվող նախաձեռնություններին մասնակցելու սահմանափակ հնարավորություններ,
• Ուսումնական միջավայր	• Սովորողներին

	մոտիվացնող,հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացումն ապահովող,ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի ստեղծում • Սովորողների առօրյա ուսումնառության և ինքնակրթության մոտիվացիան խթանող միջավայրի ապահովում
• Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	• Բարձրորակ կրթության ապահովում • Օլիմպիադաների մասնակցության ոչ հոգացնող ցուցանիշներ • Բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրվածության պակաս
• Տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները	• Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրման պակաս դասապրոցեսում • Ժամանակակից տեխնոլոգիաների և լաբորատորիաների բացակայություն • Տեխնոլոգիաներին և նորարարությանը համահունչ քայլելու մարտահրավերներ

3. Ուսումնական հաստատության գործունեությունը

3.1 Կրթական կարիքների նկարագրությունը

Ուսումնական հաստատությունը ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված բոլորի համար հավասար կրթության իրավունքի, անվճար պարտադիր միջնակարգ կրթության հնարավորության հիմքերը:

«Ամրակիցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը իրականացնում է տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրեր:

Դպրոցը նախատեսված է 150 աշակերտի համար և իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական կարիքները՝ ըստ լիցենզիայի

- տարրական հանրակրթական՝ 41 տեղ
- հիմնական հանրակրթական՝ 62 տեղ
- միջնակարգ հանրակրթական՝ 47 տեղ

Դպրոցի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Ուսումնական հաստատության գործունեությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝

1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը

2) մարդկային արժանապատվության պահպանմանը

3) իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը

4) ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը

5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը

6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը

7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

Կրթական կարիքների գնահատման մշտադիտարկումը համակարգված և պարբերական բնույթ ունեցող ընթացակարգ է, որն ուղղված է ուսումնական հաստության որակի ապահովման գծով հիմնական խնդիրների լուծմանը:

Կարիքների ուսումնասիրման մեթոդներն են՝ թեստավորումը, դպրոցական օլիմպիադաներ, տնօրինության կողմից գրավոր աշխատանքներ, հայտորոշիչ թեստեր և այլն:

Կարիքների գնահատում, որը բաղկացած կլինի հետևյալ փուլերից՝
1. կարիքների գնահատմանը ուղղված աշխատանքների պլանավորում, պարբերականության որոշում և սահմանում
2. աշակերտական խմբի որոշում և ընտրանքի կատարում
3. գնահատման ցուցանիշների/չափանիշների համակարգի մշակում
4. գնահատման մեթոդների ընտրություն
5. ինֆորմացիայի աղբյուրների որոշում
6. ինֆորմացիայի ստացում աշակերտների մասին (էլեկտրոնային մատյանում)
7. արդյունքների մշակում՝ ստացված տվյալների համակարգում և վերլուծություն
8. կրթության կարիքների գնահատման վերաբերյալ հաշվետվության կազմում
9. ուսումնական հաստատության մանկավարժների շրջանում տեղեկատվության ապահովում գնահատված կաիրքների արդյունքների վերաբերյալ:

Աշակերտների բավարարվածության գնահատումը կիրականացվի հետևյալ հարցերի շուրջ՝

- դպրոցում ստացված գիտելիքների և ունակությունների բավարար լինելը մասնագիտություն ընտրելու հարցում
- էթիկական կողմերը
- կրթական ծրագրերի բովանդակությունը և որակը
- դպրոցի կողմից տրամադրված կրթության որակի ապահովումը, կրթության մատչելիությունը և հավասար մասնակցության հնարավորությունը
- բավարարվածության վրա ազդող այլ գործոններ:

3.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին. համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին.

«Ամրակիցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը համապատասխանում է պետության քաղաքականությանը և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Դպրոցի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Կրթության զարգացման պետական ծրագիրն համապատասխան դպրոցի կրթական համակարգը նպատակաուղղված է աշակերտների հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Դպրոցի կրթական քաղաքականության սկզբունքներն են՝

- կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման

առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը
- կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ
- ուսումական հաստատության կրթության աշխարհիկ բնույթը, ողջամիտ ինքնավարությունը
- ուսումնական հաստատությունում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը
- ուսումնական հաստատության կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը

3.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների (դահլիճներ, լաբորատորիաներ, առարկայական կաբինետներ, ճաշարան, բուժկետ և այլն) հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Ուսումնական հաստատությունը ունի բավարար ենթակառուցվածքներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

Դպրոցի շենքը կառուցվել է 2000 թվականին, ընդհանուր 685,6 մ² մակերեսով: Դպրոցը կառուցման օրվանից ի վեր չի վերանորոգվել, դասասենյակները լուսավոր են և ապահովված անհրաժեշտ օգտագործած գույքով, 2 հարկում էլ առկա են դուրս բացվող պահուստային ելքեր:

Դպրոցի տարածքը ասֆալտապատված և ցանկապատված է, կան դարբասներ, ունի պտղատու այգի:

Դպրոցում բացակայում են լաբորատորիաները, ուսումնական կաբինետները, արվեստանոցները և արհեստանոցները:

Դպրոցում գործում է Արմաթ ինժեներական լաբորատորի, որը հագեցած է անհրաժեշտ սարքավորումներով և գույքով:

Համակարգչային սենյակում կան աշակերտների թվին համապատասխան համակարգիչներ:

Դպրոցի գրադարանը բացվել է 2018 թվականին և վերանորոգվել է դիզայներական գեղեցիկ ոճով և համալրվել է նոր գրապահարաններով: Գրադարանն ապահովված է, դասագրքերով, գեղարվեստական և ծրագրային ժամանակակից գրականությամբ: Գրադանում տեղադրված է նոր սերնդի պռոյեկտոր և այն օգտագործվում է սեմինարների, հանդեսների, միջոցառումների և բաց դասերի ժամանակ:

Դպրոցում կա ՆԶՊ կաբինետ, ՝ պահոց սենյակով, որտեղ պահվում է ուսումնական ինքնաձիգը: ՆԶՊ առարկան երիտասարդների մոտ որոշակի կարողություններ ու հմտություններ ձևավորելու համար կաբինետում առկա է նաև որոշակի ուսումնական պարագաներ և սարքեր:

Դպրոցում չկա մարզադահլիճ և սպորտային գույք, առկա են սպորտհրապարակ, խաղահրապարակ:
Միջանցքներում չկան սովորողների և անձնակազմի համար հանդերձարաններ:
Դպրոցը ունի թեքահարթակ:
Դպրոցը ունի անհրաժեշտ պայմաններ տարրական դասարանների անվճար սննդի կազմակերպման համար:
Սանհանգույցը գտնվում է լավ վիճակում:
Չկա բուժսենյակ, օգտվում բնակավայրում գործող բուժծառայությունից:
Չկա հանդիսությունների դահլիճ:

Դպրոցում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է լաբորատորիաներ, ուսումնական կաբինետներ, սպորդահլիճ և համապատասխան գույք և սարքավորումներ:
Դպրոցը ուսումնական գործընթացի կազմակերպան համար ունի փորձառու և որակյալ մանկավարժական անձնակազմ: Դպրոցն ունի թվով 35 աշխատակից՝ 2 վարչական աշխատող, 21 ուսուցիչ՝ բարձրագույն մասնագիտական որակավորմամբ՝ 20 , միջին մասնագիտական որակավորմամբ՝ 1, կամավոր ատեստավորված՝ 2 ուսուցիչ , 3 ուսումնաօժանդակ անձնակազմ, 7 սպասարկող անձնակազմ:
Բազմամասնագիտական թիմում աշխատում են 1 ուսուցչի օգնական, 1 հոգեբան, «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի խմբակավար:
Դպրոցը իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ հնարավորին անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:
Բյուջեի միջոցները բավականացնում են միայն հիմնական ուղղությունների համար՝ աշխատավարձ, կոմունալ վճարներ, կոմունալ ծառայություններ, ինտեռնետ, հեռախոսակապ, տնտեսական և գրենական պարագաների ձեռք բերում:
Դպրոցում կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ու շարունակականությունը ապահովելու նպատակով կդրսևորվի կամք՝ ապահովելու անհրաժեշտ պայմաններ կրթական ծրագրերի իրականացման , կրթական գործընթաթի կազմակերպման:

4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումները

4.1 Ըստ ոլորտների նպատակների և խնդիրների մշակված են համապատասխան գործողությունները

Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Նպատակը – Շենքային պայմանների հարմարությունների ստեղծում և բարելավում

Նոր ՀՊՉ-ին համապատասխանող ժամանակակից լաբորատորիաների ստեղծում

Կրթության որակի բարելավման համար նյութատեխնիկական բազայի հարստացում

Ստեղծել կանաչապատ տարածք

Մարտավարության և պահակային ծառայության գործնական պարապմունքների բաց դասարանի ստեղծում

Խնդիրը ՝ Սմարթ դասասենյակի ստեղծում իր նյութատեխնիկական բազայով

Կատարել ծառատնկումներ կանաչապատ տարածքը ավելի գեղեցիկ դարձնելու համար

Ռիսկերը

- Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը
- Ուսուցիչների և աշակերտների մոտիվացիայի պակաս
- Սովորողների թվի նվազումը, որը կբերի ֆինանսավորման կրճատման
- Առկա ռեսուրսների և իրականացված ծախսերի անհամապատասխանության վտանգը (երբ արդյունքը չի արդարացնում ծախսված միջոցները), ծրագրային գործողությունների անարդյունավետությունը և այլն:

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- Մասնակցել տարբեր արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերի
- Ծնող-ուսուցիչ-աշակերտ համագործակցության ամրապնդում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատուներ	Ժամանակացույց	Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ	Ակնկալվող արդյունք
ՀՊՉ-ին համապատասխանող ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների ստեղծում ժամանակակից նյութերով և սարքավորումներով	Տնօրեն Համակրգող դպրոցի կոլեգիալ կառավարման մարմին խորհուրդ	2024-2029թ.	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր Դրամաշնորհային ծրագրեր Արտաբյուջետային միջոցներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ	Լաբորատորիաներ իր ժամանակակից սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով
«Սմարթ» դասասենյակի ստեղծում	Տնօրեն Համակրգող	2024-2029թ.	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր Դրամաշնորհային ծրագրեր Արտաբյուջետային միջոցներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ	Համապարփակ մոտեցում դասարանում ներգրավվածությունը ուժեղացնելու, վերահսկողությունն ու կառավարումը պարզեցնելու և ուսուցման փորձը բարելավելու համար
Սպորտհրապարակի բարեկարգում՝ արհեստական խոտածածկույթով և մարզագույքով	Տնօրեն Դասղեկներ Ծնող խորհուրդ Բարերարներ	2024-2025թ.	Դպրոցի բյուջե Արտաբյուջետային միջոցներ	Բարեկարգ սպորտհրապարակ և ժամանակակից մարզագույք Ֆիզիկական դաստիարակությանն ուղղված դասարանական և համադպրոցակ

				ան միջոցառումների կազմակերպում
Մարտավարության և պահակային ծառայության գործնական պարապմունքների բաց դասարան	Զինղեկ	2024-2025թ.	Դպրոցի բյուջե Արտաբյուջետային միջոցներ	Տրամադրող միջավայր ՆԶՊ պարապմունքների համար
Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	Համակրգող	2024-2029թ. Շարունակ աբար	Դպրոցի բյուջե Դրամաշնորհային ծրագրերի միջոցներ	Բարեկարգ միջավայր

Ակնկալվող արդյունքը

Կրթական կարիքները բավարարող ուսումնական միջավայրի ստեղծում դպրոցում (լաբորատորիաներ,բաց դասարաններ, կանաչապատ տարածք),համակարգչային տեխնիկայի, ժամանակակից սարքավումների ,լաբորատոր գույքի և նյութերի հագեցվածություն

Ոլորտ 2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Նպատակը – Արժևորել խորհրդակցական և կառավարման մարմինների դերը, ապահովել դպրոց-համայնք կապը

Ռիսկերը – Խորհրդակցական և կառավարման մարմինների ոչ բավարար իրազեկվածությունը և անտարբերություն

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- Դպրոցի խնդիրների իրազեկում և կառավարման և խորհրդակցական մարմինների մշտական ներգրավվածություն

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	**Պատասխան ատուներ**	**Ժամանակացույց**	**Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ**	**Ակնկալվող արդյունք**
Մշտապես կազմակերպել իրազեկման սեմինարներ,որը կապահովի փոխհամագործակցությունը և իրենց գործառույթների իմացությունը այդ մարմինների միջև	Տնօրեն Դասղեկներ	2024-2029թ. Շարունակաբար	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Իրազեկված և համագործակցող կառավարման և խորհրդակցական մարմիններ
Մշտապես հետևել կառավարման և խորհրդակցական մարմինների գործառույթների կատարմանը	Տնօրեն Դասղեկներ	2024-2029թ. Շարունակաբար	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Գործառույթների արդյունավետության բարձրացում
Ստեղծել շրջանավարտների խորհուրդ	Տնօրեն	2024-2028թ. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին	Դրամաշնորհներ Հանգանակություն	Ձևավորված շրջանավարտների խորհուրդ

Ակնկալվող արդյունքը

Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև մշտապես համագործակցություն, տվյալ մարմինների միջև իրենց լիազորությունների և գործառույթների մասին իրազեկվածության բարձր մակարդակ

Շրջանավարտների խորհուրդների ձևավորում

Ոլորտ 3. Մանկավարժական համակազմ

Նպատակ- Մանկավարժների մասնագիտական որակների բարելավում կամավոր ատեստավորման, տարակարգերի կամ այլ գիտամանկավարժական վերապատրաստումների միջոցով

Խնդիրը- Բարձրացնել մանկավարժների պատրաստվածությունը նպաստելով մանկավարժների մասնագիտական կատարելագործմանը

Ուսուցիչների մոտ զարգացնել համակարգչային իմացությունը և խթանել դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառումը

Ռիսկերը- Ուսուցիչների դժվար հարմարվելը նորարարություններին

Ռիկերի ազդեցության նվազմանն ուղղված գործողությունները

Մոտիվացնել ուսուցիչների ինքնակրթությամբ զբաղվելուն ,մասնակցությունը վերապատրաստումներին,տարակարգերին, ատեստացիաներին,կամավոր ատեստավորմանը մասնակցելուն

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	**Պատասխան ատուներ**	**Ժամանակացույց**	**Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ**	**Ակնկալվող արդյունք**
Վերապատրաստումներ, ատեստացիաներ	Տնօրեն մ/մ նախագահներ	2024-2029թ. Շարունակաբար	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր	Կարողունակ մանկավարական համակազմ
Կամավոր ատեստավորում, տարակարգ	Տնօրեն մ/մ նախագահներ	2024-2029թ. Շարունակաբար	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր	Ուսուցիչների առարկայական գիտելիքների իմացության աստիճանի գնահատում և դրա արդյունքում ուսուցչի

				դրույքաչափի փոփոխություն և հավելավճարի տրամադրում
Բավարար չափով համակարգչային գիտելիք չունեցող մանկավարժներին պարբերաբար ուղարկել վերապատրաստման դասընթացների	Տնօրեն	2024-2029թ. Պարբերաբար	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր	Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում
Ներդպրոցական վերահսկողություն	Տնօրեն խորհրդակցական մարմիններ	2024-2029թ. պլանային, պարբերական նպատակային	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Ամբողջական և համակողմանի տեղեկատվություն դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի վիճակի մասին և առաջացող խնդիրները լուծել համար ժամանակային անհրաժեշտ փոփոխությունների կատարում

Ակնկալվող արդյունքը

Ինքնազարգացած և շարունակական վերապատրաստումների մասնակցած ուսուցիչների առկայություն

Ոլորտ 4. Աշակերտական համակազմը

Նպատակը – Մարդասեր,հայրենասեր,վերլուծող,ապրումակցող,պատասխանատու,ազգային արժեքները գիտակցող քաղաքացու ձևավորում

Ազգային երգ ու պարի միջոցով հետաքրքրություն ստեղծել դեպի մեր ազգային մշակույթը

Խնդիրները- Մոտիվացնել սովորոցներին կրթական պրոցեսում

Ձևավորել արժեհամակարգ

Բարելավել ուսումնառության ոորակը

Ռիսկերը

- Սովորողների պասիվությունը
- Մոտիվացիայի պակասը
- Խթանող ազդակների պակաս

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

Սովորողներին տվյալ աշխատանքներում մոտիվացիայի խթնում ՝ ուղղված սովորողների զարգացմանը

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	**Պատասխանատուներ**	**Ժամանակացույց**	**Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ**	**Ակնկալվող արդյունք**
Ստեղծել ապահով կրթական միջավայր	Տնօրեն Համակարգող	2024-2029թ. Շարունակաբար	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Որակյալ կրթության Հայեցի դաստիարակություն

Հաշվի առնելով աշակերտների նախասիրությունները ստեղծել համապատասխան արտադասարանական խմբակներ	Տնօրեն	2024-2029թ. Պլանային	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Գիտելիքների խորացում և զարգացում
Աջակցել աշակերտական խորհրդի նախաձեռնություններին	Տնօրեն դասղեկներ	2024-2029թ. Շարունակաբար	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Սովորողների անհատական և կոլեկտիվ հարցերի լուծում
Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ	Տնօրեն դասղեկներ	2024-2029թ. Պարբերաբար	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Ճիշտ կողմնորոշում մասնագիտության ընտրության հարցում

Ակնկալվող արդյունքը

Ունենալ կարողունակ քաղաքացի զինված գիտելիքներով,արժեհամակարգով,մասնագիտորեն կողմնորոշված

Ոլորտ 5. Ծնողական համակազմ

Նպատակը - Ամրապնդել դպրոց-ծնող կապը

Խնդիրները – Ունենալ ներգրավված ծնողներ, ապահովել նրանց ներգրավվածությունը արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում

Ռիսկերը- Դպրոցի աշխատանքներում ծնողների պասիվություն

Ռիսկերի ազդոցության նվազեցմանն ուղղված գործողությունները

Տարբեր միջոցներով խրախուսել ծնողների մասնակցությունը դպրոցական տարբեր միջոցառումներին

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	**Պատասխան ատուներ**	**Ժամանակացույց**	**Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ**	**Ակնկալվող արդյունք**
Տարբեր հասարակական աշխատանքներում ծնողների ներգրավվածություն	Տնօրեն Դասղեկներ	2024-2029թ. Պլանային	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Ծնողների ակտիվ ներգրավվածություն իրականացվող աշխատանքներին
Տարբեր սեմինարների մասնակցություն	Տնօրեն	2024-2029թ. Պլանային	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Գիտելիքների բարելավում
Կազմակերպել անհատական և ընդհանուր հանդիպումներ	Տնօրեն դասղեկներ	2024-2029թ. Պարբերաբար	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Խնդիրների բացահայտում, դրանց լուծման ուղղված առանցքային քայլերի որոշում

Ակնկալվող արդյունքը

Ակտիվ տեղեկացված ծնողներ տարբեր նախաձեռնություններում,արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում:

Ոլորտ 6. Համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Նպատակը- Կարողունակ և հասարակության ինտեգրված քաղաքացու ձևավորում

Խնդիրը- Զարգացնել սովորողի՝ հասարակական կյանքին ակտիվություն ցուցաբերելու հմտությունները

Ռիսկերը- Համայնքում ձևավորված կարծրատիպերը դպրոցի գործունեության վերաբերյալ

Ռիսկերի ազդոցության նվազեցմանն ուղղված գործողությունները

Համայնքում ճիշտ իրազեկվածության ապահովում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	**Պատասխանատուներ**	**Ժամանակացույց**	**Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ**	**Ակնկալվող արդյունք**
Իրականցնել տարբեր միջոցառումներ՝ շաբաթօրյակներ, ծառատունկ	Տնօրեն Համակարգող	2024-2029թ Պլանային	Բյուջետային հատակացումներ Հիմնադիր Համայնք Անհատներ	Բնապահպանական կրթություն Մաքուր բնություն Կանաչապատ տարածքներ
Ձևավորել մշակութային՝ երգի, պարի խմբակներ	Տնօրեն Դասղեկ ԱԽ ԾԽ	2024-2029թ. Շարունակաբար	Հիմնադիր ԿԳՄՍ նախարրություն ՀԿ	Պահել և զարգացնել ազգային արվեստը
Պետության կողմից տրամադրված դպրոցական աբոնեմենտային համակարգի կիրառում	Տնօրեն Դասղեկ ԱԽ ԾԽ	2024-2029թ. Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում մեկ անգամ	Պետբյուջե	Խթանել դպրոց-մշակույթային օջախ կապը, նպաստել երեխաների և պատանիների գեղարվեստական դաստիարակությանը գեղագիտական զարգացմանը

Ակնկալվող արդյունքը

Սոցիալ-մշակութային արժեհամակարգը կիրառող դպրոց

Ոլորտ 7. Ուսումնական միջավայր

Նպատակը Ստեղծել երեխաների ուսումնառությունը խթանող, ժամանցն ապահովող միջավայր

Խնդիրը- Ապահովել ՀՊՉ-ին համապատասխան անհարժեշտ գույքով և սարքավորումներով հաստատություն

Ստեղծել արտադասարանական ու արտադպրոցական խմբակներ ըստ սովորողների նախասիրությունների

Ռիսկերը – Ֆորս մաժորով պայմանավորված սահմանափակումներ

Ռիսկերի ազդոցության նվազեցմանն ուղղված գործողությունները

Հակահամաճարակային կանոնների պահպանում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	**Պատասխանատուներ**	**Ժամանակացույց**	**Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ**	**Ակնկալվող արդյունք**
Ստեղծել ապահով ուսումնական միջավայր	Տնօրեն Համակարգող դասղեկ	2024-2029թ. Շարունակաբար	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր	Շահառուների իրավունքների խախտման բացառում
Ունենալ ժամանակակից սարքավորումներով զինված ԲՏՃՄ առարկաների լաբորատորիա	Տնօրեն Համակարգող Հիմնադիր Լիազոր մարմին	2023-2028թ. Շարունակաբար	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր Հովանավորներ	Արդիական սարքավորումներով կահավորված և անհարժեշտ նյութերով հագեցած լաբորատորիաներ և

				առարկայական կաբինետներ
Կազմակերպել ներդպրոցական,արտադպրոցական միջոցառումների,ինչպես նաև խմբակներ, հաշվի առնելով աշակերտների նախասիրությունները	Տնօրեն Դասեղկներ Ուսուցիչներ	2024-2029թ. Պլանային	Դպրոցի բյուջեի հաշվին	Անհրաժեշտ միջավայրի ստեղծում աշակերտների հետաքրքրություններիձևավորման և ինքնադրսևորման համար
Ըստ անհրաժեշտության ստեղծել երկարօրյա խմբակ	Տնօրեն Դասղեկներ, ուսուցիչներ, ծնողներ	2024-2029թ.	Դպրոցի բյուջեի հաշվին	Բարձրացնել սովորողների առաջադիմությունը

Ակնկալվող արդյունքը Սովորողների նախասիրությունների համապատասխան կարողությունների զարգացում

Ոլորտ 8. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Նպատակը ՀՊՉ վերջնարդյունքների ապահովում, կարողունակություններով օժտված քաղաքացու ձևավորում

Խնդիրը - Օլիմպիադաների,խմբակների միջոցով բարձրացնել կրթության որակը

Ստեղծել ազատ,անկաշկանդ միջավայր պահովելով բարձր առաջադիմություն

Գնահատել ՀՊՉ վերջնարդյունքները

Ռիսկերը - Տեխնիկական միջոցների բացակայություն,աշխատակիցների ոչ բավարար տեղեկացվածություն,կապի խափանում

Ռիսկերի ազդոցության նվազեցմանն ուղղված գործողությունները

Հաջողություններ գրանցած սովորողների և աշխատակիցների խրախուսում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	**Պատասխան ատուներ**	**Ժամանակացույց**	**Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ**	**Ակնկալվող արդյունք**
Իրականացնել հաճախակի մշտադիտարկումներ	Տնօրեն, դասղեկներ	2024-2029թ. Պլանային	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Կարիքների բացահայտում Կրթության որակի բարելավում Առաջադիմության բարձրացում 2024-2025 ուստարի՝ 40 % 2025-2026 ուստարի՝ 45 % 2026-2027 ուստարի՝ 50 %
Կատարել դիտարկումներ և վերլուծություններ սովորողների առաջադիմության վերաբերյալ	Տնօրեն, դասղեկներ	2024-2029թ.	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Օգնել երեխային հասկանալ իր ուժեղ ու թույլ կողմերը, ճանաչել իր ռեսուրսներն ու հնարավորությունները, ընդունել, որ մարդիկ տարբեր են և բոլորը չէ, որ կարող են լիարժեքորեն կատարել կրթական համակարգի բոլոր պահանջները
Դասալսումների միջոցով վեր հանել	Տնօրեն Դասղեկներ Մ/մ	2024-2029թ. Պլանային	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Ուսուցչի և գնահատման փորձի մասին

ուսումնադաստի արակչական առկա խնդիրները և արժևորել ներդպրոցական վերահսկողությունը	նախագահ			տեղեկության ձեռքբերում Ուսուցչի ուշադրությունը հրավիրել աշակերտի մասնակցության անհրաժեշտության վար
Առարկայական օլիմպիադաների մասնակցություն և բարձր ցուցանիշների ապահովում	Տնօրեն Մ/մ նախագահ Դասղեկ Ուսուցիչներ	2024-2029թ. Պլանային	Դպրոցի բյուջեի հաշվին	Շնորհալի երեխաների բացահայտում, նրանց կրթության կազմակերպման և օժտվածության խնդիրների հետազոտմում Խթանել տվյալ առարկայի նկատմամբ հետաքրքրությա ն աճին, մեծ թվով աշակերտների ընդգրկմանը, և, բնականաբար, նպաստել կրթության որակի բարձրացմանը Օլիմպիադաներ ի մարզային փուլի մասնակիցներ 2024թ՝ 1 2025թ՝ 2 2026թ՝ 3 2027թ՝ 4 2028թ՝ 4 Օլիմպիադաներ ի հանրապետակա ն մասնակից՝ 2025-2029թ՝ 1

Ակնկալվող արդյունքը

ՀՊՉ պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող սաների նվազեցում:

Տարբեր օլիմպիադաներում և մրցույթներում հնարավորինս աշակերտների մասնակցության ապահովում :

ԿԱՊԿՈՒ սովորողների ուսման բարելավում և առաջընթաց:

Ոլորտ 9. Տեխնոլոգիաներ և նորարարության

Նպատակը ՏՀՏ առցանց գործիքների կիրառման միջոցով ապահովել ուսման բարձր որակ

Խնդիրը Շարունակել իրականացնել ՏՀՏ առցանց գործիքների կիրառումը դասապրոցեսների ընթացքում

Ռիսկերը Համացանցի թույլ կապ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի սակավություն

Ռիսկերի ազդոցության նվազեցմանն ուղղված գործողությունները

Ռեսուրսների ճիշտ կառավարում և հովանավորների ներգրավում

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	**Պատասխանատուներ**	**Ժամանակացույց**	**Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ**	**Ակնկալվող արդյունք**
Դասապրոցեսը իրականացնել ՏՀՏ առցանց գործիքներ կիրառելով	Դասղեկ Ուսոցիչ	2024-2029թ. Պլանային	ՏՏ գործիքներ	Ավելի հագեցած ու արդյունավետ դասապրոցես Յուրաքանչյուր տարի ՏՀՏ-ի կիրառմամբ ավելացնել նոր մեթոդների և հնարների բացահայտում
Մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ,քննարկումներ,բաց դասեր	Տնօրեն Դասղեկ Ուսուցիչներ	2024-2029թ.	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում Ոլորտի մասնագետնե	Թվայնացվող նոր աշխարհում կատարվող վերափոխումների մասին

			ի ներգրավում	ինֆորմացիայի տիրապետում Մեդիադաշտի վերաբերյալ գիտելիքների ապահովում

Ակնկալվող արդյունքը

ՏՀՏ առցանց գործիքների և մեթոդների կիրառման բարձր ցուցանիշ

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Զարգացման ծրագրի իրականացումից հետո այն պետք է գնահատվի արդյունավետության համար: Գնահատումը նախատեսված է մի ամբողջ ծրագրի համար և բոլոր գործողությունները պետք է գնահատվեն:

Հ/Հ	Գնահատման ենթակա գործողության բնույթը	Արդյունքի գնահատականը	Արդյունքի գնահատման չափանիշները
1.	Ուսումնական հաստատության շենքային պայմանների և տարածքի արդիականացում	5 (գերազանց)	ամբողջությամբ ձեռք է բերվել նախատեսված գույքը,
		4 (շատ լավ)	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 75%-ի չափով,
		3 (բավարար)	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 50%-ի չափով,
		2 (վատ)	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 25%-ի չափով,
		1 (անբավարար)	նախատեսված աշխատանքները չեն կատարվել:
2.	Նյութատեխնիկական բազայի համալրում	5 (գերազանց)	ամբողջությամբ ձեռք է բերվել նախատեսված գույքը,

		4 (շատ լավ)	գույքը ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 75%-ի չափով
		3 (բավարար)	գույքը ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 50%-ի չափով,
		2 (վատ)	գույքը ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 25%-ի չափով,
		1 (անբավարար)	նախատեսված գույքը ձեռք չի բերվել:
3.	Կրթության որակի և առաջադիմության բարձրացում	5 (գերազանց)	սովորողների կրթության որակի և առաջադիմության բարձրացման գործողությունը ունեցել է չափելի արդյունք, բարձր առաջադիմություն,
		4 (շատ լավ)	գործողության իրականացումը էապես ազդել են սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա,
		3 (բավարար)	գործողության իրականացումը սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեցել է միջինից ցածր արդյունք,
		2 (վատ)	գործողության իրականացումը սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեցել է անբավարար ազդեծություն, հատկացված միջոցների օգտագործումը չի արդարացրել սպասելիքները,
		1 (անբավարար)	սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա գործողության ազդեցությունը բացակայում է:
4.	Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում	5 (գերազանց)	դպրոցում երաշխավորված են այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանությունը, ուսումնական գործընթացում բոլոր սովորողների ներառականությունը, ձևավորված է մասնակցային, սովորողների ինքնաարտահայման ու ինքնադրսևորման նպաստավոր միջավայր, խթանվում է ազգային և համամարդկային արժեքների համակարգը,
		4 (շատ լավ)	դպրոցում այլակարծությունը սահմանափակող, սովորողների շահերն ու իրավունքերը

			ոտնահարող դեպքեր հազվադեպ են գրանցվում, իրականցվում է արդյունավետ վերահսկողություն, առկա է սահմանափակ ներառական միջավայր,
		3 (բավարար)	դպրոցում սահմանափակվում է այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանությունը նշանակալի արդյունք չի ապահովում, ձևավորված չէ ներառական միջավայր, ազգային և համամարդկային արժեքների մասին սովորողների պատկերացումները աղավաղված են,
		2 (վատ)	դպրոցում այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանության համակարգային մոտեցում առկա չէ, կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներն առանձնացված են ուսումնական գործընթացից,
		1 (անբավարար)	դպրոցում այլակարծությունը, սովորողների շահերն ու իրավունքերի պաշտպանությունը երաշխավորված չէ, ներառական և մասնակցային արժեքային միջավայր ձևավորված չէ:
5.	Դպրոցի աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում	5 (գերազանց)	անձնակազմի արժևորումն ընկած է դպրոցի կառավարման հիմքում, անձնակազմի խրախոսումն իրականացվում է գնահատման չափանիշների բազմագործոն (աշխատողի ինքնակրթություն, մասնագիտական զարգացում, նախագծային աշխատանքների որակ, տարբեր միջոցառումների կազմակերպում և նախաձեռնողականություն, սովորողների գրանցած արդյունքները տարբեր մրցույթներում) համակարգի կիրառության հիման վրա, խրախուսման համակարգը վայելում է անձնակազմի աջակցությունը, ձևավորված է անձնակազմի ինքնակրթության նպաստավոր

			միջավայր, անձնակազմն աչքի է ընկնում սեփական նախաձեռնություններով, այդ թվում՝ վերապատրաստումների մասնակցությամբ,
		4 (շատ լավ)	առկա է արժանիքների հիման վրա (merit based) անձնակազմի խրախուսում, որին, սակայն, անձնակազմը վերապահումով է մոտենում, դպրոցում առկա է անձնակազմի ինքնակրթության բարենպաստ միջավայր,
		3 (բավարար)	անձնակազմի խրախուսման համակարգը պրակտիկայում չի գործում, դպրոցում անձնակազմի ինքնակրթության բոլոր պայմաններն ապահովված չեն, անձնակազմը սեփական նախաձեռնություններով հանդես է գալիս հազվադեպ,
		2 (վատ)	անձնակազմի խրախուսման ժամանակ հաշվի են առնվում գնահատման սահմանափակ թվով չափանիշներ, դպրոցն անձնակազմի ինքնակրթության նպաստավոր միջավայր չէ, անձնակազմը մոտիվացված չէ սեփական նախաձեռնություններով հանդես գալու հարցում,
		1 (անբավարար)	գնահատման չափանիշների համակարգի հիման վրա խրախուսում չի իրականացվում:
6.	ՏԻՄ-ի, ծնողական համայքնի, գործընկերների հետ համագործակցություն	5 (գերազանց)	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է ամենօրյա հաղորդակցություն, ծնողական համայնքն ակտիվորեն ներգրավված է ուսումնադաստիարակչական գործընթացում,
		4 (շատ լավ)	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է արդյունավետ համագործակցություն, ծնողական համայնքը ներգրավված է ուսումնադաստիարակչական գործընթացում, սակայն սեփական նախաձեռնություններով հանդես չի գալիս,
		3 (բավարար)	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է սահմանափակ համագործակցություն,

			ծնողական համայնքն ուսումնադաստիարակչական գործընթացում ներգրավվածությամբ աչքի չի ընկնում,
		2 (վատ)	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ համագործակցությունը ֆորմալ բնույթ է կրում, ծնողական համայնքն ուսումնադաստիարակչական գործընթացում չունի բավարար ներգրավվածություն,
		1 (անբավարար)	բացակայում է դպրոցի կապը ՏԻՄ-ի, ծնողական համայքնի, գործընկերների հետ:
7.	Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման ապահովում	5 (գերազանց)	ճանաչողական գիտելիքների, մշակութային և գեղագիտական ճաշակի բարձրացման նպատակով սովորողների հետ հաճախակի տարվում են արտադպրոցական աշխատանքներ՝ ներգրավելով նաև ծնողական համայնքին, դպրոցում առկա են երկարօրյա ուսուցման ապահովման հնարավորություններ՝ մշակված սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա,
		4 (շատ լավ)	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են պարբերաբար՝ ընդգրկելով սահմանափակ ուղղություններ, դպրոցի երկարօրյա ուսուցման ապահովման հնարավորությունները չեն համապատասխանում սովորողների և նրանց ծնողների կարիքների հետ,
		3 (բավարար)	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են ոչ պարբերաբար, դպրոցն ապահովված է երկարօրյա ուսուցման սահմանափակ հնարավորություններով,

		2 (վատ)	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են հազվադեպ, դպրոցն ապահովված չէ երկարօրյա ուսուցման նվազագույն հնարավորություններով,
		1 (անբավարար)	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքներ չեն տարվում, դպրոցն ապահովված չէ երկարօրյա ուսուցման հնարավորություններով:
8.	Համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների հետ	5 (գերազանց)	տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև հաստատված է արդյունավետ երկխոսություն, նիստերը կրում են պարբերական բնույթ, որոնց շրջանակներում քննարկվում են դպրոցում կրթության կազմակերպման օրակարգային հարցերը,
		4 (շատ լավ)	տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև առկա է փոխվստահելի հաղորդակցություն, նիստերի կազմակերպում կազմակերպվում են ոչ հաճախակի՝ ոչ բոլոր անդամների մասնակցությամբ,
		3 (բավարար)	կառավարման ու խորհրդակցական մարմինների հետ համագործակցությունն իրականացվում է տնօրենի նախաձեռնությամբ, խորհրդակցական մարմինների անդամները թերահավատորեն են մոտենում դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման հարցում ներգրավմանը,
		2 (վատ)	առկա է ընդհատ հաղորդակցություն տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև, խորհրդակցական մարմինները դպրոցի կառավարմանն առնչվող հարցերի քննարկման ժամանակ հանդես են գալիս միայն որպես ունկնդիր,
		1 (անբավարար)	տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև համագործակցությունը կրում

			է ֆորմալ բնույթ, նիստեր չեն կազմակերպվում, կառավարումն իրականացվում է միանձնյա,
9.	Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում	5 (գերազանց)	դպրոցում բացառված են հալածանքի, օտարման և բռնության դեպքերը, առկա է առողջ բարոյահոգեբանական միջավայր, աշխատանքներ են տարվում բռնություն ծնող վարվելակերպը բացառելու ուղղությամբ, յուրաքանչյուր սովորող տեղեկացված է իր իրավունքներից ու պարտականություններից, բռնության դեպքերի կանխարգելման գործում ներգրավվում են նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչները, կազմակերպվում են առանձին քննարկումներ,
		4 (շատ լավ)	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր հազվադեպ են գրանցվում, յուրաքանչյուր դեպքի համար իրականացվում է այդ իրավիճակը պայմանավորող գործոնների ուսումնասիրություն, մշակվում է դրանց կրկնությունը կանխարգելող գործողությունների ծրագիր,
		3 (բավարար)	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր պարբերաբար գրանցվում են, առկա չէ դրանց կանխարգելման համակարգային մոտեցում, իրականացվող սակավաթիվ գործողությունները բավարար արդյունք չեն տալիս,
		2 (վատ)	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելմանն ուղղված աշխատանքները ձախողված են, դպրոցում առկա անառողջ բարոյահոգեբանական միջավայրը սահմանափակում է ուսումնական կրթություն կազմակերպելու հնարավորությունները

		1 (անբավարար)	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքերը կրում են պարբերական բնույթ, խարխլված է դպրոցի բարոյահոգեբանական միջավայրը,

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար միջոցները, նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն ուղղակիորեն կապված է միջոցների, նյութատեխնիկական պարագաների, մարդկային ռեսուրսների հետ:

Դպրոցում կրթության որակը բարելավելու, սովորողների առաջադիմությունը բարձրացնելու նպատակով ծրագրում եմ դպրոցում ստեղծել ապահով և բարենպաստ կրթական միջավայր, որի հիմնական նպատակը կլինի՝

Ուսումնական հաստատության մասնաշենքը վերանորոգելու ուղիների մշակումը,

Հնարավության դեպքում պետական միջոցների հաշվին մարզադահլիճի կառուցում և համապատասխան գույքով ապահովում,

Առանձնացված առարկայական կաբինետների ստեղծում և զինում անհրաժեշտ բազայով,

ՏՀՏ ներդրման ընդլայնումը՝ մանկավարժների մասնագիտական զարգացման, նոր մեթոդների կիրառման և ուսումնական գործընթացն ակտիվացնելու համար:

Դպրոցի շենքի վերանորոգման խնդիրը լուծելու ուղղություններից մեկը պետական կառույցների հետ համագործակցելն ու իրավիճակը լիարժեք ներկայացնելն է:

Գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է՝ հայթայթել միջոցներ:

Գործընթացի ցանկալի արդյունքը ապահովելու համար կձեռնարկվեն քայլեր պետական մարմիններին, բարերարներին և ծնողական համայնքին ներգրավելու համար:

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով ծրագրում եմ մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ՝ պետական և միջազգային կազմակերպություններ:

Դպրոցում նոր համակարգիչների, էլեկտրոնային գրատախտակների և այլ ժամանակակից սարքավորումների պակասը թույլ չի տալիս ներդնել արդի աշակերտակենտրոն և ակտիվ մեթոդներ, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

Դպրոցի գերխնդիրն եմ համարում կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը:

Դպրոցի գերխնդիրն եմ համարում կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը:
Սովորողների համար ստեղծել տեսական գիտելիքների կիրառման համար բավարար կարողություններ ու հմտություններ:
Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման և ուսումնական միջավայրի բարելավման գործընթացների ակնկալվող արդյունքներն են.
Գրավիչ ուսումնական միջավայր,
Ուսումնական գործընթացում ՏՀՏ-երի արդյունավետ օգտագործում,
Սովորողների մարզական պարապմունքների լիարժեք իրականացում,
Դպրոցում ուսուցիչների և սովորողների ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական առողջ միջավայր:
Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորումը և զարգացումը.
Բարձրորակ կրթություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է դպրոցում ձևավորել՝
կրթության կազմակերպման համալիր մոտեցում.
Կրթության բնագավառին անհարիր երևույթների բացառում,ուսուցման որակի կառավարման նոր համակարգի ներդրում,
Յուրաքանչյուր առարկայի ուսուցումը համապատասխանեցնել երեխայի շահերին՝ հետագայում մասնագիտություն ձեռք բերելու և աշխատաշուկայի կողմից նոր սերնդին ներկայացվող մրցակցային պահանջներից ելնելով:
Խնդիրների իրականացման մեխանիզմների նկարագրությունը.
սովորողների կարողությունների և հմտությունները ձևավորմանը զարգացնելու նպատակով անհրաժեշտ է՝
սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին՝ զգայության, ընկալման և մտապատկերման, վերլուծելու, մտահանգումներ անելու, ընդհանրացնելու և համադրելու, ինքնուրույն որոշումներ ընդունելու և հիմնավորելու միջոցով.
զարգացնել հաղորդակցական և համագործակցային կարողություններն ու հմտությունները (լսել-ընկալել-բանավիճել, տեղին օգտագործել սովորած եզրույթները, օգտվել ժամանակակից հաղորդակցմանտեխնիկական միջոցներից, սովորել և սովորեցնել, դրսևորել առողջ մրցակցություն, ճանաչել և ընդունել ուրիշների շահերը, լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները).
զարգացնել ստեղծագործական և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները (դրսևորել ստեղծագործական երևակայություն, ընկալել և ընդունել նյութական ու հոգևոր նոր արժեքներ, անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները, գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրսևորել

պարտաճանաչություն, ճիշտ տնօրինել ժամանակը, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները).
Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձևավորման և զարգացման գործընթացների ակնկալվող արդյունքներն են՝ յուրաքանչյուր շրջանավարտ ունի ազգային մտածողություն, մտահոգվում է ազգային և պետական խնդիրների լուծմամբ, ունի պետական չափորոշչով սահմանված գիտելիքների պաշար և դրանք կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն:

Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են մարդկային, բյուջետային և նյութատեխնիկական հետևյալ միջոցները՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ	ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԵՐ
Ուսումնական հաստատության շենքային պայմանների արդիականացում	Տնօրեն, Վարչատնտեսական մասի համակարգող, Շինարարներ, Ծնողական համայնք	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր Դրամաշնորհային ծրագրեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ	Շինանյութ, կոսմետիկ հարդարման նյութեր	Զարգացման ծրագրի վերանայման ամենամյա հաշվետու վերլուծություն
Նյութատեխնիկական բազայի համալրում	Վարչատնտեսական մասի համակարգող	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր Դրամաշնորհային ծրագրեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ	Տնտեսական, կենցաղային պարագաներ, գրենական պիտույքներ,	Զարգացման ծրագրի վերանայման ամենամյա հաշվետու վերլուծություն

Կրթության որակի և առաջադիմության բարձրացում	Տնօրեն, Մ/Մ նախագահներ Դասղեկներ ուսցիչներ	Բյուջետային հատկացումներ	Մեթոդական գրականություն, Տեղեկատվական տեխնոլոգիաներ, դիդակտիվ նյութեր, առարկայական պաստառներ	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, համապատասխան արձանագրություններ
Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում	Տնօրինություն Ուսուցիչներ Ծնողներ աշակերտներ	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում	Նյութատեխնիկական միջոցներ չի պահանջվում	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն
Դպրոցի աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում	Տնօրեն Վարչատնտեսական մասի համակարգող Լիազոր մարմին	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր	Դրամական միջոցներ	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն,

Դպրոց համայնք կապեր, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցություն, արտադպրոցական և երկարօրյա ուսուցում	Տնօրինություն, ՏԻՄ մարմիներ Ուսուցիչներ Ծնողական խորհուրդ	Բյուջետային հատկացումներ Հիմնադիր	Դպրոց համայնք կապեր, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցություն համար նյութատեխնիկական միջոցներ անհրաժեշտ չեն, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման համար դրամական միջոցներ	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն
Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում	Տնօրինություն Ուսոցիչներ Պատկան մարմիններ	Ֆինանսական միջոցներ չի պահանջվում	Նյութատեխնիկական միջոցներ անհրաժեշտ չեն	Զարգացման ծրագրի կատարման

Վերահսկողության մեխանիզմներ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11դդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պետական ուսումնական հաստատության խորհուրդը աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ա1մենամյա հաշվետվությունը, որն իր մեջ ներառելու է.

1. ծրագրի իրականացման արդյունքների տարեկան ամփոփում և ներկայացում դպրոցի կառավարման և մանկավարժական խորհուրդներին,
2. ծրագրի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերլուծություն, վերլուծության արդյունքում միջոցառումների վերանայում, այդ

ուղղությամբ կառավարման և խորհրդակցական մարմինների նիստերում առաջարկությունների քննարկում,

3. ուսուցիչների և սովորողների գործունեության շարունակական թեմատիկ, ընթացիկ, անհատական և կանխարգելիչ վերահսկողության իրականացում:

Վերահսկողության նպատակը՝

- ուսումնական հաստատության խորհուրդի վերահսկողական լիազորությունների իրականացման ապահովմանն ուղղված գործունեություն,
- նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին,
- վերահսկվող գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն զարգացման ծրագրով սահմանված պահանջներին,
- խորհրդի կողմից կառավարվող, ձևավորվող կամ ձևավորման ենթակա նյութական ու ոչ նյութական ակտիվները.
- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բոլոր տիպի մուտքերի և ելքերի և նյութական ու ոչ նյութական ակտիվների հավաքում, հաշվեգրում.
- սույն ծրագրով սահմանված լիազորություններին համապատասխան, վերահսկողութան իրականացվում:

Զարգացման ծրագրի հաշվետվությունների և ժամանակացույցի սահմանված ձև

1.	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրա ցումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ
2.							
3.							
4.							
5							

Վերջաբան

Սույն զարգացման ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22 N 35-Ն և 2023 թվականի ապրիլի 18-ի 399-Ա հրամանները:
Հայտարարված մրցույթի արդյունքում ինձ հնարավորություն է ընձեռվել մշակել դպրոցի ապագային միտված իրական ռազմավարական ծրագիր:
Դպրոցի շահառուները ակնկալում են, որ կգտնվեն առկա խնդիրների լուծումները և կդրսևորվի կամք՝ «Ամրակիցի միջնակարգ դպրոցը» ուղղորդելու դեպի զարգացում, դեպի ապագա և այդ ապագան պետք է կերտվի ուժեղ, հավասարակշռված և առաջադեմ դպրոցի տեսլականի շուրջ:
«Ամրակիցի միջնակարգ դպրոցի» ապագայի վերաբերյալ իմ ծրագրերը և շահառուների առաջ ներկայանալու պատասխանատվությունը ինձնից հեռու է վանել անիրականալի խոստումներ և ծրագրեր շռայլելը, սթափ գնահատելով մեր իրական հնարավորությունները և ռեսուրսները:
Արդյունավետ կառավարման արդյունքում ունենալու ենք դպրոց՝ որը ամենայն պատասխանատվությամբ է կատարում իր գործառույթները:
Համոզված եմ, որ համատեղ ջանքերի արդյունքում ունենալու ենք մեր բոլորի երազած ապագա «Ամրակիցի միջնակարգ դպրոցը»:

Նպատակը. Սույն ծրագիրը մշակելու իմ նպատակը արտացոլվում է «այն մոտեցման մեջ, թե ինչ է մտածում անհատը պետության և հասարակության մեջ իր ունեցած դերի, ինչպես նաև ուրիշների վրա իր ազդեցության մասին» և եթե այս ծրագիրը հավանության արժանանա, ապա սա կլինի իմ ծրագրի իրական արժեքը:

Բովանդակություն

1. Հաստատության գործունեությունը
2. Իրավիճակի վերլուծությունը՝ ուժեղ և թույլ կողմերը
3. Նպատակների և խնդիրների սահմանումը
4.Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը
5. Պատասխանատուները
6. Արդյունքների գնահատման չափանիշները
7. Ռիսկերը
8.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները
9. Վերահսկողության մարմիններ
10. Վերջաբան: